



ՔԱԶՄԱՎԵՊ

ՈՅԻ · 1871 — ՔԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ · — ԱՊՐԻԼ

ԲԱՐՈՅԵԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՆՏԵՍՈՒԹԻՒՆ

(Տես Երես 33.)

ՏԱՄՆԵՐՈՐԴ ԽՈՍԿԵՑՈՒԹԻՒՆ

Անհաւասարութիւն մարդկանց մէջ . պատճառ ները և օգտակարութիւնն . և զայն չափառութեարք :

Ինչպէս որ կը կասկածուեր քիչ ատենէն Միջըպոյի աւանը մեծ արկածք մը ունեցաւ . լընուար և ծիւպիւխառն կրցածնուն չափ դո՞հ ընելնէն ետքը , սահմանական գործատուննին դադրեցընելու . զրամանալուխնին սպառեր էր , և նոր ճարելու ալ հնարք չկար . գրեթէ տուրեառութիւն չէր ըլլար և գիները այնպէս ընկած էին որ և ոչ ծախքերնին կրնային հանել , ալ անկարելի էր իրենց համար գործը շարունակելը :

Այս վերջին նեղութեանց մէջ ընկած , չանացին ըստ կարելւոյն նուազ շարիք պատճառել թէ իրենց և թէ գործաւորաց :

Ամեն կողմանէ մէյմէկ անպատեհութեան կը հանդիպէին . ամենայն գործաւորները մէկէն ետ ճամբելը իրենց

մարդասիրութեան ոգւոյն չէր յարմարեր , միւս կողմանէ զամենն ալ աշխատցընելն ալ կարելի չէր , թոշակները նուազեցընելով հանդերձ . վասն զի զիները նուազեցընելով իսկ անկարելի էր տուրեառ ընել . նաև պէտք էր նախնական նիւթը նորոգել , և այս նկատմամբ յոյս չկար զրամանալուխ ձեռք բերելու :

Երկու ուրիշ հնարք ալ կար . շարթուն մէջ աշխատութեան օրերը քիչ ցընել կամ գործաւորաց թիւը վերածել : Առաջին կերպով կարելի էր ամենայն գործաւորներն ալ պահել , վերջին կարօտութեան պէտք եղածը մատակարարելով անոնց . այսու ամենուն հետ հաւասարապէս վարուած կ'ըլլային . բայց այս հաւասարութիւնը՝ խեղճութիւն ըսել էր ոմանց համար : Երկրորդ կերպով՝ կրնային ընտրութիւն ընել միայն այն բանուորները արձրկելով՝ որոնք աշխատութենէ դադրելով յետին աստիճանի չէին նեղուեր , և պահել զանոնք որ առանց իրենց աւուրշէ-

քին չեխն կրնար ընտանիքնին հոգալ։ Այս կերպս ալ անպատճեթեան ունէր՝ զիրենք ոմանցկող մնակից երեցընելու։ բայց որովհետև աւելի մարդասիրական երեցաւ՝ հաստատուեցան իրենց մտածութեանը վրայ և աչք առին ամենայն փճախօսութիւն։ Շարթուն սկիզբը գործաւորաց հասկըցուցին ըլլալիքը և թէ ինչ խեղճ հարկի մէջ էին։ ծանուցին ինչ որ հասուն քննողութեամբ որոշեր էին, որ էր ընդհատել աշխատութիւնները՝ գործաւորաց երրորդ մասը պահելով, և աւելցուցին թէ յաջորդ շաբաթ օրը կ'իմացընեն արձըկուելիքները ու մնալիքները։ Այս քանի մը օրուան մէջ ամենայն կարելի եղած տեղեկութիւնները առին զանազան բանուորաց ընտանեաց վիճակին վրայօք, այնպէս որ երբ շաբաթ օրը ըրած ընտրութիւննին իմացան աշխատաւորք՝ կարծուածէն շատ նուազ տըրտունջ ծագեցաւ։ Արձկուողներէն ամենքն ալ մոմուալով լսեցին իրենց արձկուիլը։ ոմանք անիրաւութեան դէմ բողոքեցին։ և ինչպէս սովորական է նաև ընդհանուր՝ գանգատներ սկսան ընել կենաց անհաւասար վիճակներուն դէմ։ Տիւրրէ հասկըցաւ թէ պէտք էր գործաւորաց գառնացեալ սրտին գանգատները լոեցընել, որով վիճակնին ալ գառնագոյն կ'ըլլար։ Այսպէս սկսաւ խօսիլ յաջորդ կիրակին։

— զիտէք, բարեկամքդ իմ, նոր ազէտք մը մեր հասարակութեան զլուխը եկաւ, զոր թէպէտ շատ ատենէ ի վեր կը գուշակէինք, սակայն գարձեալ տաժաննելի եղաւ կրողներուն համար, և տրտմութեան պատճառ ամեննուս համար, որ չենք կրնար առանց վշտանալու մեր ազգականաց և բարեկամաց նեղութիւնը տեսնել։

— Շնորհակալ ենք ձեր բարեսրտութեանը, ըստ հեղնաբար Պօղոս Պուտար, բայց ասով մեր վիճակը չիլաւնար։

— Ես ալ զիտեմ, Պօղոս։ բայց գոնեա միխթարութիւն մըն է զիտնալ թէ ուրիշներն ալ ցաւակից են մեզի և թէ

յետին ձախորդութեան մէջ պատրաստ են ամենայն կերպով զմեզ միխթարելու։

— Հաւագոյն կը համարիմ, ըստ Անդրէաս խրոխտութեամբ մը, որ ամուրի ըլլալուն համար արձակեալներէն մէկն էր, աւելի լաւագոյն կը համարիմ օգնութեան կարօտ ըլլալու վիճակի մէջ չինալ։

— Իրաւունք ունիս Անդրէաս, լաւագոյն է մարդուս համար ինքզինքն հոգակ քան թէ այլոց զթութեանը զիմել։ բայց պէտք է զիտնալ համակամութեամբ կրել այն դժբախտութիւններն որոնց չենք կրնար առաջը առնուլ։ Կրնայինք օրինակի համար, արգելուլ որ վերջին երկու հունձքերը անյաջող չըլլային։

— Ոչ, Պ. Տիւրրէ, բայց պէտք է խոռ տովանիս որ հացի պակսութիւնը ումանց աւելի և ոմանց պակաս նեղութիւն կը պատճառէ։

— Կը հաւանիմ, Անդրէաս, բայց գիտես հնարք մը որով ամենայն մարդիկ հաւասար ըլլան աշխարհիս մէջ։ կարծես թէ անհաւասարութիւնն այնպիսի բան մ'ըլլայ՝ զոր կարենանք անհետացնել օրինաց օգնութեամբ կամ օրինաց զրբին մէկ յօդուածով։ Քննենք և զատենք։

Աչքերնիս բնութեան վրայ դարձնենք, ամեն տեղ անհաւասարութիւն կը տեսնենք, ըլլայ կլիմայից զանազանութեան մէջ ըլլայ երկրիս հարստութեան մէջ։ ոչ թէ միայն մարդկանց մէջ կայ այս անհաւասարութիւնը այլ նաև կենդանեաց և տնկոց մէջ։ Տեսեղը, ձին, շունը, կատուն, չկայ երկուք մը որ մէկմէկու նման ըլլան, կամ նոյն բնաւորութիւնը նոյն հեղութիւնը և նոյն աշխուժութիւնն ունենան։ Բայց մարդկանց մէջ ինչ տարբերութիւն։ Վասն զի բնական յատկութեանց վըրայ շատ մը մտաւորական և բարոյական յատկութիւններ կ'աւելնան, որով կ'ըլլայ մարդս բազմայօդ (complexe) էակը զոր կարենանք երևակայել։

Սկսինք քիչ մը դիտել, հաշուեալ ոմանք զօրաւոր են կորովի և քաջառողջ . ոմանք տկար են վատառողջ տժգոյն և անզօր . մէկը կարող է երկայն աշխատութիւններ ընելու, միւսը շուտով ողեսպառ կ'ըլլայ . ոմանք ճարպիկութիւնին և ճկունութիւն և ճարտար են մարմնոյ ամենայն շարժմունք և աշխատութիւն ընելու . այլք ընդ հակառակն ծանրաշարժ են դանդաղ և թանձր աշխատութիւններ կարող են ընելու :

Մտաց կարողութեան նկատմամբ նոր կարևորագոյն և աւելի շատ տարբերութիւններ կը տեսնենք . մէկը մտաբաց է, դիւրաւ կ'ըմբռնէ . միւսը թանձրամիտ է և գժուարաւ խելք կը հասցընէ . ոմանց յիշողութիւնը սուր, ամենայն բան մտքերնին կը պահեն . այլք գժուարաւ կը սորվին և բան մը մտքերնին չիմնար : Մէկը վառվըռուն երեակոյութիւն և հնարադիւտ միտք ունի . պատեհը չիկորսընցըններ ու ըստ այնմ մտածութիւններ կը ստեղծու . միւսը չիդիտէր բան մը ստեղծու, ամենեին ըստ առթին միտքը չօգտուիր և առիթը փախցընելէն ետքը աչքը կը բացուի : Մէկ ուրիշ մը ողջ դատումն ունի, հեռատես է և յանդգնութեամբ բանի ձեռք չիդարնէր . ընդ հակառակն անոր դրացին մոլար դատումն ունեցող է, անխելքութեամբ մեծամեծ գործոց մէջ կը նետուի և անխոհեմութեամբը զանոնք վտանգի մէջ կը ձգէ :

Նորանոր տարբերութիւնք ալ բնաւորութեանց և վարմունքի նկատմամբ : Ոմանք գործօնեայ, աշխատասէր և ժիր են . այլք թոյլ հեղդ և ծոյլ են . ոմանք կարգաւորութիւն և խնայողութիւն սիրող են, այլք զեղիսք և վայելք սիրովք . կան որ բարի են և առաքինի . կան ալ որ չար են և անզգամ . ոմանց համար բարի կը սեպուի ամենայն ինչ ընելք, մինչզեռ այլք իբրև բարոյական ընդունելի եղածները միայն կը գործադրեն . մէկը բարի է, տաքսիրա, սիրա շահող, զամենքը իրեն ձգող . ուրիշ մը խստափիրտէ, անձնասէր, ոխակալ, իրեն օղնել

կրցողներուն սիրտը կը վիրաւորէ ու կը խրտեցնէ : Ճիշդ է այս նկարագիրը :

— Զեմ ընդդիմանար . այս զանազանութիւնները կը տեսնենք անդադար մարդկանց մէջ . բայց ի՞նչ հետևանք կ'ուզես հանել ասկէ :

— Ասկէ պատճառեալ միակ հետեւանքն է թէ ընկերութիւնն ալ՝ որ է մարդկանց միութիւնը՝ պէտք է որ ասոր նման ըլլայ : Անհաւասարութիւնը մարդկանց մէջ ամենուրեք ըլլալուն՝ պէտք է որ ամենուրեք ըլլայ նաև ընկերութեան մէջ . երբ զմարդ փոխելու ըլլաս՝ ընկերութիւնն ալ կրնաս փոխել . իրաւ է կրնանք դաստիարակութեամբ լաւցընել զմարդ՝ միտքը բանալ, հակամիտութիւններն նուաճել, բարի սովորութեանց վարժեցընել և նուազեցընել այսու բնական անհաւասարութեանց ազդեցութիւնը : Սակայն որչափ ալ ջանանք՝ չիյուսանք աշխարհիս վրայէն անհետ ընել անհաւասարութիւնը . և ոչ իսկ փափաքինք :

— Ի՞նչպէս, գոչեցին լէոնարտոս, Անդրէաս, Միքայէլ և այլք, ինչուան հաւասարութեան փափաքիլն իսկ կ'արգելուս մեղի :

— Այս բարեկամք, կ'ըսեմոր փափազելու չենք . չեք գիտեր ի՞նչ կ'ըլլար աշխարհս եթէ անհաւասարութիւն չըլլար . անով իմանալով որ կերպ կերպ դիւրութիւններէ ու վայելքներէ զուրկ ենք՝ զանոնք ձեռք բերելու փափաք մը կ'արթըննայ սրտերնիս . նոր կարօտութիւններ կը պատճառէ և ջանք կը հնարաւորէ : Գիտէք թէ ի՞նչու համար բարբարոսութեան մէջ յառաջադիմութիւնը սաստիկ ծանր կ'ըլլայ . վասն զի մարդս ուրիշներուն վայելիցն աչք չունի, և մարմնոյ միայն անհրաժեշտ պէտքերը գիտէ, և երբ զանոնք հոգայ՝ կը հանգչի ու կը քնանայ : Բառնանք ընկերութեան մէջէն անհաւասարութիւնը և ահա իսկոյն մարդիկ վայըրենեաց թմբրութեանն ու բթամտութեանը մէջ կ'կյնան : Այս է ուզածնիդ :

— Ոչ, Պարտն, ըստաւ լէոնարտոս .

մենք հաւասարութիւն չենք ուղեր ան-
դործութեամբ և խեղճութեամբ։

Բայց որչափ ալ ջանափ՝ պէտք է որ
յոշկամն կրէք։ Հաւասարութիւնն՝ 'ի
բարեկեցութեան կը ծնանի անդործու-
թիւն և թմբրութիւն՝ շատ աւելի քան
զիշուառութե հաւասարութիւնը։ Այս
վերջին վիճակիս մէջ՝ մարզս գոնէ իր
պիտոյիցը զգացմունքէն կը մղուի. ընդ
հակառակն՝ առաջին վիճակին մէջ գոհ
և քաղցր կենաց մէջ ըլլալովը չիկայ
բան մը որ կարենայ իր փափաքներն
արթնցընել և ջանփի յորդորել զինքը։
Գոհ ըլլալով իր բաղդին վրայ՝ չիմտա-
ծեր վիճակը փոխելու և բարեկեցու-
թեան մէջ կը նիրհէ։ Վայ իրեն անկէ
ետքը. վասն զի յառաջադիմութեան
ճամբուն մէջ երբ մարդկութիւնը չի-
յառաջեր՝ ետ կ'երթայ։

Բայց ասիկա խնդրոյն թեթև մէկ
մասն է. կ'ախորդիմաւելի ապացուցա-
նել քեզի թէ ինչպէս անհաւասարու-
թիւնը կ'օգնէ ուղղակի ամենայն մարդ-
կանց բարեկեցութեանը և թէ ինչպէս
բարի է իւր աղղեցութիւնը ընկերու-
թեան վրայ։ Օրինակի դիմենք, ու դուք
ըսէք ինձի անկեղծաբար. միթէ լը-
նուար, Տիւպիւսոն, Պլոնտոյ մեր եր-
կրին մեծամեծ ծառայութիւններ չեն
ըներ։

— Տարակոյս չիկայ, բսաւ Լէոնար-
տոս. և կրնայիր զհրամանքդ ալ իրենց
թուոյն մէջ համրել։

— Շնորհակալ եմ աղնուութեանդ,
Լէոնարտոս։

— Բսածս մարդահաճութեան հա-
մար չէ հապա զուտ ճշմարտութիւն է,
վրայ բերաւ Լէոնարտոս, և շատերն ալ
իրեն ձայնակից եղան։

— Կրկին անդամ շնորհակալ եմ,
բարեկամիդդ իմ. բայց միթէ ստակ ու-
նենալուն համար այս պարոնայքը կըր-
դան օգտակար ըլլալ մեր երկրին։ Ա-
մենեին։ Այլ ունենալուն համար խելք,
անխոնջ գործունէութիւն, ճիշդ և ողջ
մտածութիւն, հեռատեսութիւն, երես-
կայութիւն հասարակաց հաճոյ ըլլալու

համար գիւտեր ու հնարքներ գտնելու,
և մեծ ճարտարութիւն մը իրենց գոր-
ծատունը առաջին կարգի մէջ պահե-
լու. վերջապէս կարգէ դուրս հսկողու-
թիւն յամենայնի արթուն ըլլալու և
ամեն բան տեսնելու։ Իրաւ է թէ չէ։

— Այս բանս անժխտելի է, ըսին Տիւ-
րբէի անուանած գործատեարց քովլ աշ-
խատող բանւորները։

— Աղէկ ուրեմն. ահաւասիկ այս
յատկութիւններն իրենց համար յաջո-
ղութեան դուռն բացին և ոչ թէ ստակ
ունենալին։ Տեսանք հարուստ անձանց
ձեռքովլ ուրիշ գործատանց բացուիլը
մեր երկրին մէջ, որք չիկրցան յարա-
տեել, վասն զի աղէկ կարգի դրած չէին
դործերնին. և չիկրցան զանոնք անտե-
սել, վասն զի պակաս եղաւ ճարտա-
րութիւննին, խոհեմութիւննին, գոր-
ծունէութիւննին և երբեմն նաև ընդ-
հանուր տեսչութեան ողին։ Առաջին-
ներուն ունեցած յատկութիւններն ի-
րենց յաջողութեանը պատճառ եղան և
նաև մեր հասարակութեան յաջողու-
թեանցը՝ զոր քսան տարուընէ 'ի վեր
կը վայելէ։ Այս անձինքն իրենց հան-
ճարոյն պտուղը քաղեցին, բայց մեղի
աւելի բարիք ըրին կենք, գործունէու-
թեամբ և մեր երկրին մէջ ցանած դր-
րամազլուխներովը և Միրըպոյի մէջ
եղած ամեն բանին աժէքը եւելցընե-
լով, այնպէս որ ամենքը օգտուեցան ի-
րենց ճարտարութենէն. ամեն օր ար-
դիւնքը կը քաղեն և իրենց մեռնելէն
ալ ետքը պիտի քաղեն. վասն զի այս-
պիսի մարդկանց ըրած բարիքը իրենց
հետ չիմեռնիր։

Ուսի

կը շարունակուի։